

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

«ՕՐԱՆԺ ԳՐՈՒՊ» ՍՊԸ -ն ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-24/3-ՀԱՆԴԵՐՁԱԼՔ ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
6	<p>Տաբատ` շտաբային, ամենօրյա երեսացու կտորը ռիպստոպ տեսակի, մուգ կանաչավուն 235գ/մ2 մակերեսային խտությամբ, 44 % բուրդ, 54 % պոլիէսթեր և 2 % լաիկրա մանրաթելերից: Աստառը` 90գր/մ2 բյազ տեսակի կտորից: Տաբատի արտաքին տեսքը` համաձայն հաստատված նմուշի, արտադրվում են 44/2 մինչև 64/6 չափս-հասակի (նմուշը և չափս-հասակային սանդղակը տրամադրվում է պատասխանատու ստորաբաժանման կողմից): Տաբատը տղամարդու կազմվածքի համար նախատեսված ձևվածքով է, կազմված է առաջամասից, հետնամասից և գոտուց: Առաջամասը` կողային գրպաններով, գրպանների միջուկը` երեսացու կտորից, կողային կարերում հավասարաչափ անցկացված է 1.8-2մմ լայնությամբ կապույտ կամ կանաչ գույնի 342 գր/մ2 խտությամբ մահուդե երիզներ: Աջ հետնամասում կտրված գրպան` կափույրով, որը կոճկվում է մեկ պլաստմասե կոճակով և օղակով: Փողքերի ստորին հատվածը Յսմ ծաված և կարված է գաղտնակարով: Գուլֆիկը մշակվում է զարդակարված և ամրակարված շղթայով, որը գոտու մասում կոճկվում է մետաղյա կեռիկով և մեկ հատ 18մմ կոճակով: Գոտին 8 հատ կամրջակներով է, մինչև 45մմ լայնքով գոտեփոկի անցկացման համար: Պիտակավորումը: Տաբատի ներսից` աջ հատվածում, գոտու ներքևից` կարվում է պիտակ` արտադրանքի չափս-հասակի (նվազագույնը 25մմ * 25մմ չափերով , գրվածքը` լավ տեսանելի), արտադրող կազմակերպության անվանումը արտադրման տարեթիվը (գրվածքը` լավ տեսանելի) և խնամքի պիտակը` լվացքի, քիմմաքրման, արդուկման թույլատրելի չափանիշների գրառմամբ (գրվածքը` անզեն ընթեռնելի): Դիմացի հատվածում` վերևից 2-րդ կոճակի վրա պետք է կախված լինի թղթյա պիտակ, պիտակի վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, չափսը, արտադրող</p>

կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը: Փաթեթավորումը՝ եռաշերտ սովարաթղթե արկղերով, արկղերի մեջ, մինչև 10 լրակազմ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, 1 պարկի մեջ՝ 1 լրակազմ: Արկղերի և պարկերի չափսերը պետք է համապատասխանեն համազգեստի չափսերին, որպեսզի համազգեստը չճմրթվի: Արկղերը՝ փակ, պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսը և տարեթիվը:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО ОРАНЖ ГРУПП в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱԿԾ-ՏՆՏԿ-ԲԱՃԱՊՁԲ-24/3-ՀԱՆԴԵՐՁԱԼՔ ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
6	